ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

17.12.2024 N 02/16.4/20107-2024

«ՍՈՒՐԳԵՎ» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության տնօրեն
տիկին Մարիաննա ՍԱՆԹՐՈՍՅԱՆԻՆ
էլ.փոստի հասցե՝surgev.llc@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի (ամբողջությամբ) լուծելու մասին

Հարգելի տիկին Սանթրոսյան,

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՍՈՒՐԳԵՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2023 թվականի հունիսի 13-ին կնքվել է ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկայի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության մատուցման N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/6 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 15-ի N 1802-Ն որոշմամբ նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի համաձայն 2024 թվականի նոյեմբերի 22-ին Ընկերությանը ծանուցվել է Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին N 2 համաձայնագրի նախագիծը՝ ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2024 թվականի դեկտեմբերի 13-ը ներառյալ (15 աշխատանքային օր): Ընկերության կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 7.14 կետով սահմանված ժամկետում չեն ներկայացվել պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները:

Հիմք ընդունելով Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 7.14 կետի պահանջները՝ Պատվիրատուն Ընկերության հետ կնքված Պայմանագիրը 2024 թվականի դեկտեմբերի 17-ից միակողմանի լուծում է:

Համաձայն Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը 2024 թվականի դեկտեմբերի 17-ին կտեղադրվի տեղեկագրում, որին հաջորդող տասներորդ օրացուցային օրը կկայացվի Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումն Ընկերությանը գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու մասին: Որոշումը կայացվելուն հաջորդող օրն այն գրավոր կտրամադրվի լիազորված մարմնին և Ընկերությանը:

Եթե մինչև Պատվիրատուի ղեկավարի որոշման կայացման վերջնաժամկետը լրանալու օրը՝ համաձայն ներքոնշյալ աղյուսակի ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի հաշվեհամարներին Ընկերության կողմից վճարվեն պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ապա Պատվիրատուն Ընկերությանը Ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազորված մարմին:

Պայմանագրի ապահովում				Որակավորման ապահովում		
Երաշխիքի գումար /ՀՀ դրամ/	Տուժանքի գումար /ՀՀ դրամ/	Երաշխիքի հաշվեհամար	Տուժանքի հաշվեհամար	Երաշխիքի գումար /ՀՀ դրամ/	Տուժանքի գումար /ՀՀ դրամ/	Տուժանքի և երաշխիքի հաշվեհամար
1 068 474	112 126	900008000664	900005000758	1 602 711	168 189	900008000664

Հարգանքով՝

12/17/2024

X

ԳՈՒՐԳԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Signed by: YEGHIAZARYAN GURGEN 2710630095

Գուրգեն ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ՔԿ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական
հաշվառման վարչության պետ Հասմիկ Բաղինյան, Հեռ: 011621822
Կատարող՝ գնումների կազմակերպման
բաժնի պետ՝ Արայիկ Մնացականյան, Հեռ: 011621722